«ԱՄԲՈՂՋԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՄԲՈՂՋԱՏԻՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԼՅՈՒԴՎԻԳ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Իշխանության, քաղաքական վարչակարգի ժամանակակից լեգիտիմությունը հիմնված է իրավունքի հավասարության վրա, և այն ընդունվում է որպես ժողովրդավարական կառավարում, ժողովրդավարական գործընթաց: Սակայն եթե ժամանակակից քաղաքական բոլոր վարչակարգերն իրենց համարում են ժողովրդավարական, դա ամենևին չի նշանակում, որ դրանք բոլորն էլ այդպիսին են կամ միատեսակ ժողովրդավարական են, ինչպես ոչ ժողովրդավարական վարչակարգերը կարող են ունենալ տարբեր դրսևորումներ: Ինչպիսի՞ն են դրանց հիմնական տարբերությունները: Այս հարցը, քաղաքական կառավարման խնդիրներով պայմանավորված, ներկայումս էլ կարևորվում է:

Խորհրդային վարչակարգը արևմտյան ժողովրդավարությանը հակադրում էր, այսպես կոչված, ժողովրդավարության այլ տարբերակ՝ «սոցիալիստական» կամ «ժողովրդական»՝ այն ներկայացնելով որպես միակ լեգիտիմ վարչակարգ, որը Արևմուտքում շատերը (հատկապես որոշակի սոցիալական խմբեր) լուրջ էին ընդունում: Սակայն պետք է նշել, որ 20-րդ դարի 90-ական թվականներին այդ վարչակարգի հետ փլուզվեց նաև «սոցիալիստական ժողովրդավարության» առասպելը: Իրական ժողովրդավարությունից սոցիալիստական ժողովրդավարության տարբերությունը, մեր մոտեցմամբ, հետևյալն է. մի կողմից իրական, լիբերալ-դեմոկրատական վարչակարգն է, մյուս կողմից՝ ամբողջատիրական (տոտալիտար) վարչակարգն իր ժողովրդավարական տեսքով: Հետևաբար մեզ հետաքրքրող թեմայի տեսանկյունից հարցը կարելի է ձևակերպել այսպես.

- ի՞նչ է ենթադրում «ամբողջատիրություն» (տոտալիտարիզմ) հասկացությունը,
- ինչպե՞ս այն կարելի է ըմբռնել և բնութագրել:

Ամբողջատիրությունը (տոտալիտարիզմ) (լատ.՝ totalis–ամբողջ, totalitas–լիակատար) քաղաքական վարչակարգ է, իշխանության ձև, որին բնորոշ են սահմանադրական իրավունքների ու ազատությունների փաստացի վերացումը, հասարակական կյանքի լիակատար ենթարկումը իշխանության շահերին և համատարած (տոտալիտար) վերահսկողության հաստատումը հասարակության նկատմամբ, քաղաքական ընդդիմության ու այլախոհների հանդեպ բռնարարքները, քաղաքացիական հասարակության գաղափարախոսական բազմակար-

ծության (պլյուրալիզմի) բացակայությունը և այլն: Ամբողջատիրությունը 20-21-րդ դարերի պատմության մեջ համարվում է «հիմերային»[1] քաղաքական վարչակարգ, որը հիմնված է իշխանությանը տիրապետող անձի կամ խմբի կողմից մարդկանց միտքը ենթարկելու մեկ իշխող գաղափարախոսության (կեղծ գաղափարախոսության) և այդ իշխանության քաղաքական համակարգն ուղղորդելու այդ կեղծ գաղափարախոսության իրացման խնդիրներին: Նշված հասկացությունը անցել է ձևավորման, զարգացման ու մեկնաբանման բարդ ու երկար ճանապարհ, ունի բազմաթիվ բնորոշումներ, սահմանումներ, որոնք ժամանակի ընթացքում փոփոխվել են դրականից դեպի բացասականը: Մշտապես եղել են մտածողներ, որոնք արտահայտվել են ամբողջատիրության օգտին կամ դրան հակառակ: Այսպես, գերմանացի փիլիսոփա Կարլ Լյովիտն «Իմ կյանքը Գերմանիայում մինչև 1933 թվականը և հետո» գրքում ցույց է տալիս, որ որոշ գրողներ, բանաստեղծներ, փիլիսոփաներ, օրինակ՝ Օսվալդ Շպենգլերը (1880-1936), Ստեֆան Գեորգեն (1868-1933), Մարտին Հայդգերը (1880-1976) և այլք, հող են նախապատրաստել ֆաշիզմի համար, թեկուզ նրանցից յուրաքանչյուրը նողկում էր Հիտլերից: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո բազմաթիվ մտավորականներ այս կամ այն կերպ տրվեցին մարքսիզմի որևէ տարբերակին՝ ստալինականությանը, մաոյականությանը, կաստրոյականությանը: Հետպատերազմյան ժամանակաշրջանում նշված հասկացությունը քիչ թե շատ ազդեցություն ուներ և մեծապես առնչվում էր մասնագետների ու գիտնականների շրջանում Խորհրդային Միության կերպարի մասին կարծիքի փոփոխությանը[2]:

Առհասարակ *տարբերակվում են ձախ և աջ տիպերի ամբողջատիրական վարչակարգեր: Առաջինը կոմունիստական վարչակարգեր ունեցող երկրներն են* (նախկին ԽՍՀՄ-ը և Արևելյան Եվրոպայի սոցիալիստական ճամբարում ընդգրկվածները), *երկրորդը՝ նացիստական և ֆաշիստական վարչակարգ ունեցող երկրները* (Գերմանիան՝ նացիստների և Իտալիան՝ ֆաշիզմի տիրապետության ժամանակ): Ընդ որում, անհրաժեշտ է նշել, որ ամբողջատիրությունը երբեք միասնական, միաձույլ (մոնոլիտ) չի եղել. նրա առանձին վարչակարգերի միջև դրսևորվել են էական տարբերություններ: Այս փաստը քննարկվում է նաև քաղաքական տեսաբան Հանա Արենդթի «Ամբողջատիրության ակունքները» աշխատությունում: Յուրաքանչյուր ամբողջատիրական իշխանություն, ըստ հեղինակի, տարբերակման կարիք ունի[3]: Այսպես,

---

[1] **Հիմերա** – հին հունական դիցարանում եռամարմին առասպելական հրեշ, որն ուներ երեք գլուխ՝ առջևից առյուծի, մեջտեղում այծի, իսկ պոչի հատվածում վիշապի տեսքով: Փոխաբերական իմաստով «հիմերան» ընկալվում է որպես անհնարին ու անհամատեղելի երևույթների համադրություն: Քաղաքական վարչակարգերը հաճախ ներկայացվում են նաև որպես «հիմերային»:

[2] Տե՛ս **Бенетон Ф.** Введение в политическую науку. М.: Весь Мир, 2002, էջ 183:

[3] Տե՛ս **Арендт Х.** Истоки тоталитаризма. М.: ЦентрКом, 1996, էջ 87:

Իտալիայում ֆաշիստական վարչակարգը ղեկավարվում էր պետության գերակայության գաղափարով: Այն առանձնանում էր ավանդական կառույցները պահպանելու ձգտմամբ, որի օրինակը Բենիտո Մուսոլինիի (1883-1945) և Վատիկանի միջև կնքված, այսպես կոչված, Լատերանյան համաձայնագիրն է (1929), որով կարգավորում էին կաթոլիկական եկեղեցու և ֆաշիստական վարչակարգերի միջև հարաբերությունները[4]: Բենիտո Մուսոլինի վարչակարգին բնորոշ էին իշխանության համեմատաբար փոքր ծավալի կենտրոնացումն ու միահեծանությունը: Ֆաշիստական կուսակցության հետ միասին երկրում որոշակի ազդեցություն ունեին ռազմական գործիչները, արիստոկրատիան, եկեղեցին, պետական բյուրոկրատիան: Ձևական իմաստով շարունակում էր գործել Սենատը: Առանձնահատկություններից մեկն էլ այն էր, որ Իտալիան միապետություն էր, և Մուսոլինին ժամանակ առ ժամանակ հաշվետվություն էր ուղարկում միապետ Վիտոր Էմմանուել III-ին: Իտալական ֆաշիզմը տարբերվում էր նաև ահաբեկչության և պատժամիջոցների (ռեպրեսիաների) առավել քիչ կիրառմամբ՝ ի տարբերություն Գերմանիայում տեղի ունեցած գործընթացների:

Գերմանիայում ազգային-սոցիալիստական վարչակարգը ղեկավարվում էր ազգի կամ ազգ-պետության գերակայության տեսությամբ: Նացիոնալ-սոցիալիզմի նպատակն էր վերաստեղծել Գերմանական ռայխի (պետության, տերության) հզորությունը՝ հաստատելով արիական ցեղի համաշխարհային տիրապետությունը:

Ամբողջատիրական վարչակարգերի տարբերությունը պարզորոշ և բացահայտորեն նկատվում է հատկապես կոմունիստների և նացիոնալ-սոցիալիստների կողմից իշխանության իրացման գործընթացներում: Եթե կոմունիստները համաշխարհային պատմության մեկնաբանման տեսական և վերլուծական գլխավոր գործիքը համարում էին դասակարգը, ապա նացիոնալ-սոցիալիստները՝ ազգը կամ ռասան: Եթե կոմունիստները կողմ էին արտադրության միջոցների հանրայնացմանը, ապա նացիոնալ-սոցիալիստները, ընդհակառակը, կարևորում էին մասնավոր սեփականության դերը տնտեսության կազմակերպման գործում: Եթե նացիոնալ-սոցիալիստները անտեսում էին դեմոկրատիան և լիբերալիզմը, ապա խորհրդային վարչակարգը ներկայացնում էր, որ ցանկանում և ձգտում է կյանքի կոչել ժողովրդավարական սկզբունքները (իհարկե, ըստ իրենց ըմբռնման)[5]: Դեռ ավելին, պետք է

---

[4] **Լատերանյան համաձայնագիր** – համաձայնագիր, որի հիման վրա 1929 թվականի փետրվարի 11-ին Վատիկանը դարձել է անկախ պետություն: Լատերանյան համաձայնագրերն իտալական պետության և Սուրբ գահի միջև կնքված պայմանագրերի համակարգ են իրենց հարաբերությունների իրավական կարգավորման մասին: Համաձայնագրերը կնքվել են Ապոստոլյան պալատում Պյետրո Գասպարի կարդինալի և Իտալիայի վարչապետ Բ. Մուսոլինիի միջև միապետ Վիտոր Էմմանուել III-ի անունից:

[5] Առավել մանրամասն տե ս **Гаджиев К. С.** Сравнительная политология: Учебник // К. С. Гаджиев. М.: Экономика, 2012, էջ 280-284:

նշել, որ ԽՍՀՄ-ում «ամբողջատիրություն» հասկացությունը հետպատերազմյան շրջանում օգտագործվել է Արևմուտքի ֆաշիստական և նացիստական վարչակարգերը բնութագրելու քարոզչական նպատակներով: Օրինակ՝ խորհրդային մեծ հանրագիտարանում նշվում է, որ «ամբողջատիրական պետությունը» բուրժուական պետության տարատեսակ է՝ առավել հետադիմական իմպերիալիստական տարրերի բացահայտ դիկտատուրայով: Եվ օրինակ են բերվում հիտլերյան Գերմանիան և ֆաշիստական Իտալիան:

Ամբողջատիրությունը բռնապետության (դիկտատուրայի) տարատեսակ է: «Ամբողջատիրություն» տերմինն առաջին անգամ (1923 թ.) քաղաքական բառապաշար են ներմուծել իտալացի քաղաքական գործիչ Ջովանի Ամենդոլան (1882-1926), որը ֆաշիզմը բնորոշում էր որպես ամբողջատիրական համակարգ, և գրական քննադատ ու հրապարակախոս (լիբերալ) Պիեռո Հոբետին (1901-1926), իսկ հետագայում այդ տերմինը կիրառել են հակաֆաշիստ Լ. Բասոնը, ֆաշիզմի պաշտոնական գաղափարախոս Ջովանի Ջենտիլինին (1875-1944) և այլք: Իտալական ֆաշիստների առաջնորդ Բենիտո Մուսոլինին 1925 թվականին այն գործածեց իր շարժումը և վարչակարգը բնորոշելու համար՝ la stato totalitario (ամբողջատիրական պետություն): Ներկայացնելով կորպորատիվ համակարգի գոյության երեք կարևոր պայմանները՝ Բ. Մուսոլինին ամբողջատիրական պետությունը դնում էր երկրորդ տեղում (միակուսակցական համակարգից հետո): Նա ամբողջատիրական էր համարում այնպիսի պետությունը, որը կարող է կուլ տալ, կլանել… ամբողջ էներգիան, ժողովրդի բոլոր հետաքրքրություններն ու հույսերը[6]: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Նիդերլանդների ռայխկոմիսար (1943-1945) Պաուլ Ռիտերբուշը՝ նացիոնալ-սոցիալիզմի տեսաբաններից մեկը, վճռականորեն հանդես գալով արևմտյան ժողովրդավարության «պլյուրալիստական բազմակուսակցական պետության» դեմ, տվել է ամբողջատիրական պետության հետևյալ ձևակերպումը. «…Ամբողջատիրական է այն պետությունը, որի օգնությամբ մեկ կուսակցությունը կամ մեկ գաղափարախսությունը բարձրացել է մի չափանիշի և պահանջներ է ներկայացրել բացառապես ազգային կյանքի քաղաքական շինարարության համար… Ամբողջատիրական պետությունը ռելյատիվիզմի (հարաբերապաշտության) վերաբերյալ պատկերացումների սկզբունքային խախտում է, որոնց համաձայն՝ ցանկացած կուսակցություն կրում է միայն մեկ հարաբերական ճշմարտություն»[7]:

1929 թվականին «Թայմս» թերթը «ամբողջատիրություն» տերմինը գործածեց Խորհրդային Միությունում քաղաքական վարչակարգը

---

[6] Հղումը ըստ **Желев Ж.** Фашизм. Тоталитарное государство. М.: Новости, 1991, էջ 40-41:

[7] Նույն տեղում:

բնութագրելու համար: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ամբողջատիրական սկսեցին անվանվել ֆաշիստական Գերմանիայում, ԽՍՀՄ-ում, «սոցիալիզմի հաղթանակած» երկրներում հաստատված վարչակարգերը:

Ամբողջատիրության գաղափարախոսական արմատները սկզբնավորվում են դեռևս Հին աշխարհի քաղաքական ուսմունքներից: Ըստ որոշ հետազոտողների՝ ամբողջատիրության տարրեր են պարունակում նաև հին հույն փիլիսոփա Պլատոնի հայացքները: Այսպես, ավստրիացի փիլիսոփա Կարլ Պոպերը (1902-1994) գտնում էր, որ Պլատոնի քաղաքական ծրագիրը «միանշանակ կարելի է անվանել ամբողջատիրական»[8]: Մոտավորապես նույն տեսակետն ուներ անգլիացի փիլիսոփա Բերտրանտ Ռասելը (1872-1970): Ըստ բրիտանացի պատմաբան Առնոլդ Թոյնբիի (1889-1975)՝ Պլատոնի իդեալական պետության մասին կարելի է խոսել որպես ռեակցիոն ուտոպիայի: Որոշ հետազոտողներ էլ ընդգծում են պլատոնյան ծրագրի նմանությունը ֆաշիզմի, մյուսները՝ նմանությունը կոմունիզմի հետ: Իսկապես, պլատոնյան տեքստերում կան ոչ քիչ ձևակերպումներ, որոնք հիշեցնում են այն, որը 20-րդ դարում ստացավ ամբողջատիրություն անվանումը՝ ղեկավարին անխոս ենթարկվելու, խաղաղ ժամանակ ռազմական կարգապահության մասին և այլն: Սակայն «Պետություն» և «Օրենքներ» աշխատություններում կան որոշակի ձևակերպումներ, որոնք հաջողությամբ կարելի է հակադրել ամբողջատիրությանը: Այսպես, Պլատոնը «Օրենքներում» գրում է, որ պետությունը, որտեղ օրենքն ուժ չունի և ինչ-որ մեկի իշխանության տակ է, ենթակա է խորտակման, իսկ որտեղ օրենքն է գործում, այն պետության և ամբողջ բարիքի փրկության հիմք է[9]: Այս ամենին կարելի է ավելացնել նաև նրա այն արտահայտությունը, որ անթույլատրելի է ցանկացած քաղաքացու քաղաքացիական իրավունքների որևէ խախտում, որը կարող է հանգեցնել դատական գործընթացի[10], և նմանատիպ այլ մոտեցումներ:

Միջին դարերում ամբողջատիրության գաղափարներ են առաջ քաշել և զարգացրել Թոմաս Մորը (1478-1535), Թոմազո Կամպանելան (1568-1639) և այլք: Ամբողջատիրության առանցքային գաղափարներից մեկը համընդհանուր հավասարության հաստատման պահանջն էր: Հետագայում՝ արդեն նոր ժամանակներում, ֆրանսիացի հեղափոխական Գրակ Բաբյոֆը (1760-1797) անհրաժեշտ էր համարում կառուցել ժողովրդական պետություն: «Դավադրություն հավասարության համար» շարժման ծրագրում Գ. Բաբյոֆը հիմնավորել է ժողովրդական զանգվածների ապստամբության անհրաժեշտությունը, որը պետք է

---

[8] Տե՛ս **Կ. Պոպեր,** Բաց հասարակությունը և նրա թշնամիները, թարգ.՝ Մ. Հարությունյանի, հ. I, Պլատոն, Եր., «Հայաստան», 2001, էջ 147:

[9] Տե՛ս **Платон.** Собр. соч. В 4 т. Т. 4. М.: Мысль, 1994, էջ 167-168:

[10] Տե՛ս նույն տեղը, էջ 341:

նախապատրաստեր հեղափոխականների գաղտնի (ընդհատակյա) կազմակերպությունը: Ապստամբությունը վերացրել է բարձրագույն իշխանության նախկին մարմինները՝ ձևավորելով ժամանակավոր հեղափոխական կառավարություն՝ Ազգային ժողով, որը հաստատում էր ժողովրդի դիկտատուրա:

Ամբողջատիրական հայացքներ ունի նաև ֆրանսիացի լուսավորիչ, փիլիսոփա Ժան-Ժակ Ռուսոն (1712-1778): Ըստ նրա՝ արդարության, հավասարության և ազատության խնդիրները կարող է իրականացնել պետությունը՝ որպես ժողովրդի ընդհանուր կամքի արտահայտման գործիք: Ժ.-Ժ. Ռուսոն իր «Հասարակական դաշինքի մասին» աշխատության մեջ պնդում է, որ անհատի և պետության շահերը նույնն են, և որ պետության պարտականությունն է «ընդհանուր կամքի» իրացումը:

Բռնությամբ հասարակության վերափոխման գաղափարը, ինչպես նաև այլախոհների նկատմամբ անհանդուրժողականությունը բնորոշ էին նաև 19-րդ դարի ֆրանսիական և անգլիական սոցիալիստներին (Անրի Սեն-Սիմոն, Շառլ Ֆուրիե, Ռոբերտ Օուեն)[11]: Հետագայում ամբողջատիրական գաղափարներ զարգացրին գերմանացի հայտնի մտածողներ Կարլ Մարքսը, Ֆրիդրիխ Նիցշեն և այլք:

Ամբողջատիրությունն իր լիարժեք դրսևորմամբ քաղաքական իրականություն է դարձել 20-րդ դարում՝ պայմանավորված հասարակության զարգացման արդյունաբերական փուլ մտնելու հանգամանքով: Այս հասկացության գիտական հիմնավորման առումով կարևոր դերակատարություն են ունեցել քաղաքական տեսաբաններ Նիկոլայ Բերդյաևի (1874-1948) «Ռուսական կոմունիզմի ակունքներն ու իմաստը» (1937) և ավստրիացի տնտեսագետ Ֆրիդրիխ Հայեկի (1899-1992) «Ճանապարհ դեպի ստրկություն» (1944) աշխատությունները[12]: Ֆ. Հայեկը ամբողջատիրության երևան գալու պատճառը համարում էր 19-րդ դարի վերջերին դասական լիբերալիզմի գաղափարների, սկզբունքների ճգնաժամը և սոցիալիստական զանգվածային շարժումները: Վերլուծելով արևմտաեվրոպական հումանիստական պատմությունը՝ սկսած 19-րդ դարի երկրորդ կեսից՝ Ֆ. Հայեկը բացահայտել է ամբողջատիրության ու սոցիալիստական ուսմունքների միջև եղած ծագումնաբանական կապը և բացարձակ բռնության ու կամայականության ձևավորման խնդիրը՝ որպես իշխանության պատճառ ու նախադրյալ: Վերջինս միաժամանակ նշել է, որ ամբողջատիրական համակարգերը, իրենց բոլոր տարբերություններով հանդերձ, ունեն որոշակի ընդհանրություններ՝ անհատի բացարձակ արժեքների ժխտում և պետական որոշակի նպատակին, խնդիրներին առնչվող այդ արժեքների չափում-

---

[11] Տե՛ս **Сумбатян О. Г.** Тоталитаризм – политический феномен XX века // "Социально-гуманитарные знания", № 1, 1991:

[12] Տե՛ս **Бердяев Н. А.** Истоки и смысл русского коммунизма. М.: Наука, 1990, **Хайек Ф.** Дорога к рабству. М.: Новое издательство, 2005:

ների իրականացում[13]: Սակայն ամբողջատիրության հիմնական հետազոտությունները սկսվեցին 1950-ական թվականներին, մասնավորապես, երբ լույս տեսան Հանա Արենդթի «Ամբողջատիրության ակունքները»[14] (1951), Կարլ Ֆրիդրիխի և Զբիգնև Բժեզինսկու «Ամբողջատիրական դիկտատուրա և ավտոկրատիա»[15], Ռայմոն Արոնի «Ժողովրդավարություն և ամբողջատիրություն»[16] աշխատությունները: Ամբողջատիրությունը դարձավ քաղաքական իրականություն, որի պատճառները հետազոտողները համարում են հաղորդակցության զանգվածային համակարգերի ստեղծումը, հասարակական կապերի բարդացումը, սոցիալ-քաղաքական և սոցիալ-տնտեսական հին կառուցվածքների վերացումը և այլն: Հատկապես 19-րդ դարի վերջերին առաջացան միագաղափար զանգվածային շարժումներ, մարգինալ խմբեր, որոնք հեշտությամբ ընկալեցին ամբողջատիրության գաղափարախոսությունը: Ստեղծվեց գաղափարական այն մոդելը, որից հեշտությամբ օգտվեցին իշխանության ձգտող ոչ ժողովրդավարական քաղաքական ուժերը: Քաղաքական տեսաբան Հանա Արենդթը հիշյալ աշխատության մեջ նշում էր, որ «ամբողջատիրությունը էապես տարբերվում է քաղաքական կառավարման բոլոր այլ ձևերից, որոնք մեզ հայտնի են որպես բռնապետություն, տիրանիա, դիկտատուրա: Գալով իշխանության՝ այն իր հետ բերում է բացարձակապես քաղաքական նոր ինստիտուտներ՝ քանդելով տվյալ երկրի սոցիալական, իրավական և քաղաքական բոլոր ավանդույթները: Անկախ նրանից, թե ինչպիսին են տոտալիտար կառավարման գաղափարախոսության կոնկրետ ազգային ավանդույթները կամ հոգևոր աղբյուրները, այն վերափոխում է դասակարգերն ու զանգվածները, կուսակցական համակարգը դուրս է մղում ոչ միայն մեկ կուսակցության դիկտատուրայով, այլև զանգվածային շարժումով և իշխանության հենակետ դարձնելով ոստիկանությունը»[17]: Հ. Արենդթի դիտարկմամբ՝ «ամբողջատիրական մարդը» ատոմացված, օտարված անհատ է, «զանգվածի» ներկայացուցիչ, որը միավորվում է կոլեկտիվ սոցիալական մարմինների մեջ բռնության համապարփակ գաղափարախոսական ձեռնածության շնորհիվ, իսկ ամբողջատիրական շարժումը ոչ թե դասակարգի, այլ սոցիալական հիմքերից կտրված զանգվածների շարժում է: Հ. Արենդտը նշում է, որ պետք է տարբերել ամբողջատիրական շարժումը ամբողջատիրական վարչակարգից կամ կառավարումից: Ըստ նրա՝ ոչ բոլոր ամբողջատիրական շարժումներն են վերածվել ամբողջատիրական վարչակարգերի[18]:

---

[13] Տե՛ս **Хайек Ф.**, նշվ. աշխ., էջ 167:

[14] Տե՛ս **Арендт Х.,** նշվ. աշխ., 1996:

[15] Տե՛ս **Carl J. Friedrich, Zbigniew Brzezinski.,** Totalitarian Dictatorship and Autocracy, Cambridge: Harvard University Press, 1956:

[16] Տե՛ս **Арон Р.** Демократия и тоталитаризм =Démocratie et totalitarisme. (1963). М.: Текст, 1993:

[17] **Арендт Х.,** նշվ. աշխ., 1996, էջ 193:

[18] Տե՛ս նույն տեղը, էջ 201-207:

1952 թվականին ԱՄՆ-ում կայացած միջազգային գիտահավաքում ամբողջատիրությունը բնութագրվեց որպես փակ հասարակություն, որտեղ ամեն ինչ, սկսած երեխաների դաստիարակությունից մինչև մթերքների արտադրություն, վերահսկվում է միասնական կենտրոնից[19]:

Քաղաքական վարչակարգ ասելով հասկանում ենք քաղաքական համակարգի գործառական (ֆունկցիոնալ) կողմը: Իրավական սահմանմամբ այն կառավարման պաշտոնական ձևն ու օրինական մեթոդն է, իսկ սոցիոլոգիական մոտեցմամբ՝ հասարակությունը ղեկավարելու հատուկ սոցիալական մեխանիզմ, միջոց:

Ընդհանուր առմամբ ամբողջատիրությանը բնորոշ են որոշակի հատկանիշներ, որոնք առանձնացրել են ամերիկյան քաղաքագետներ Կարլ Ֆրիդրիխը և Զբիգնև Բժիզինսկին: Դիտարկենք դրանք:

1) Բոլորին պարտադրվող պաշտոնական գաղափարախոսություն, նախկինում ձևավորված պետական-հասարակական կարգի ժխտում և քաղաքացիների համախմբում նոր հասարակական հարաբերությունների կառուցման համար, պետական հատուկ մարմինների միջոցով հասարակական գիտակցության ձևավորում:

2) Միասնական զանգվածային կուսակցության կողմից իշխանության մենաշնորհում, որը կառուցված է օլիգարխիական սկզբունքներին համապատասխան և ղեկավարվում է խարիզմատիկ առաջնորդի կողմից, որն իր ձեռքում է կենտրոնացնում քաղաքական, տնտեսական և գաղափարախոսական իշխանությունը: Իհարկե, կարող են գործել և հանդես գալ այլ կուսակցություններ, բայց դրանք սովորաբար ունենում են ձևական բնույթ՝ առանց հասարակությունում լուրջ դերակատարության:

3) Ոստիկանական պատժիչ համակարգ, որն իրականացնում է համընդհանուր վերահսկողություն, որին ծառայում է նաև դատական համակարգը: Այս համակարգի միջոցով պարբերաբար կատարվում են զանգվածային բռնություններ, որոնք հասարակության մեջ պահպանում են մշտական վախի մթնոլորտ՝ դրանով նպաստելով կարգ ու կանոնի պահպանմանը:

4) Կուսակցական վերահսկողություն զանգվածային տեղեկատվական միջոցների (ԶՏՄ-ների) վրա:

5) Զինված ուժերի նկատմամբ համընդհանուր վերահսկողություն:

6) Տնտեսության նկատմամբ կետրոնացված վերահսկողություն և տնտեսական գործունեության բյուրոկրատական (վարչահրամայական) կառավարման համակարգ[20]:

Այլ դիկտատուրաներից ամբողջատիրությունը տարբերվում է վերահսկողության և կարգորոշման բարձր աստիճանով: Ըստ էության, այն վերացնում է հասարակության ու պետության, քաղաքականի ու

---

[19] Տե՛ս **Чаликова В. А.** Существует ли тоталитарное мышление // Тоталитаризм как исторический феномен. М.: Философское общество СССР, 1989, էջ 81:

[20] Տե՛ս **Carl J. Friedrich, Zbigniew Brzezinski.,** նշվ. աշխ., 1956:

սոցիալականի, հասարակականի ու մասնավորի միջև գոյություն ունեցող սահմանը: Ամբողջատիրությունը հասարակության հակազդեցությունն է արդյունաբերականացման շրջանի ճգնաժամին, արագացված արդիականացմանը: Հասարակությունում ստեղծված նման շրջաններն ուժեղ ծանրաբեռնվածություն են կրում. խարխլվում են ավանդական կառույցները, մարդկանց մեջ զգացվում է օտարացման, միայնակության զգացում, ինչը պահանջում է համախմբում նոր հիմքով:

«Զանգվածային արտադրության» և «զանգվածային մարդու» առաջացման պայմանների խնդիրներին առնչվող համախմբման գործընթացում առանձնահատուկ դեր է խաղում գաղափարախոսությունը[21]: Ամբողջատիրության միջով անցել են գլխավորապես այն երկրները, որտեղ կա՛մ ժողովրդավարական կառույցները նոր են սկսել կազմավորվել, կա՛մ կայուն չեն եղել (Ռուսաստանի Դաշնություն, Գերմանիա, Իտալիա, Պորտուգալիա, Իսպանիա և այլն): Իհարկե, ամբողջատիրական իշխանությունների կայացման գործում լուրջ դերակատարություն են ունեցել այդ երկրներում ձևավորված առաջնորդները՝ Ադոլֆ Հիտլեր (Գերմանիա), Բենիտո Մուսոլինի (Իտալիա), Իոսիֆ Ստալին (ԽՍՀՄ), Մաո Ցզեդուն (Չինաստան), Ֆիդել Կաստրո (Կուբա) և այլն: Բազմաթիվ պատմաբաններ և քաղաքագետներ հաստատում են, որ առանց նման լիդերների չէր կարող լինել նաև ամբողջատիրությունը, այսինքն՝ վարչակարգն իր խարիզմատիկ առաջնորդով՝ «ֆյուրեր», «դուչե», «ժողովրդի հայր» և այլն: Նշված հանգամանքը նույնպես զանգվածներին ուղղորդեց անձի պաշտամունքի՝ կուրորեն ենթարկվելու տիրակալին, որը ձգտում է ամբողջական (տոտալ) սկզբունքներով վերակառուցել ոչ միայն սեփական պետությունը, այլև ամբողջ աշխարհը: Հայտնի են աշխարհի նման վերակառուցման որոշակի ծրագրեր՝ Ադոլֆ Հիտլերի «Իմ պայքարը», Լենինի և Ստալինի երկերի ժողովածուները, Մաոյի «Ցիտատնիկը» և այլն:

Պաշտոնական ամբողջատիրական գաղափարախոսությունը ենթադրում է նոր քաղաքական կարգի վերաբերյալ ուտոպիական մոտեցումներ, որոնք նախանշում են այդ կարգերին հասնելու ուղիները, բացատրում են լիդերի կամ կառավարող խմբի առաքելությունը (միսիան): Նշված տեսանկյունից ամենակարևորն այն է, որ պաշտոնական ամբողջատիրական գաղափարախոսությունը արդարացնում է պայքարը որպես քաղաքականության հիմք: Ըստ ամերիկյան փիլիսոփա Էրիկ Հոֆերի (1902-1983)՝ «զանգվածային շարժումները կարող են ծագել և տարածվել առանց աստծու հավատի, բայց ոչ երբեք առանց սատանային հավատալու»[22]: Հենց «սատանայի» (իմպերիալիստների,

---

[21] Տե՛ս «Категории политической науки». Учебник. М.: МГИМО (Университет). «Российская политическая энциклопедия» (РОССПЭН), 2002, էջ 165:

[22] **Хоффер Э.** Человек убежденный: Личность, власть и массовые движения. М.: Альпина Нон-фикшн, 2017:

կոմունիստների, դեմոկրատների, կուլակների և այլնի) հետ պայքարին է ուղղորդում զանգվածներին ամբողջատիրական գաղափարախոսությունը: Ինչո՞ւ, որովհետև թշնամու դեմ պայքարի միջոցով զանգվածներին ներկայացվում է, թե ով է մեղավոր գոյություն ունեցող խնդիրների համար, և այս ամենը նպաստում է մարդկանց հավաքագրել դասակարգային, հեղափոխական պայքարի: «Մենք ամբողջությամբ կանգնած ենք Մարքսի տեսության հողի վրա,– նշում է Լենինը,– այն առաջին անգամ սոցիալիզմը ուտոպիայից դարձրեց գիտություն՝ դնելով այդ գիտության ամուր հիմքերը, և նախանշեց ուղի, որով պետք է ընթանան՝ զարգացնելով այդ գիտությունը և մշակելով այն իր բոլոր բաղադրիչներով…: Այն պարզաբանում է հեղափոխական սոցիալիստական կուսակցության իրական խնդիրը…՝ պրոլետարիատի դասակարգային պայքարի կազմակերպումը և այդ պայքարի ղեկավարումը, որի վերջնական նպատակն է քաղաքական իշխանության նվաճումը և սոցիալիստական հասարակության կազմակերպումը»[23]: Ներդաշնակ և արդարացի նոր հասարակության ուտոպիական գաղափարը կարող է դրսևորվել տարբեր ձևերով, օրինակ՝ գերմարդկանց արիական ռասան Գերմանիայում, Մաո Ցզեդունի նոր գյուղացիական հասարակությունը կամ անդասակարգ հասարակությունը ԽՍՀՄ-ում, որտեղ ոչնչացված էին բոլոր անհավասարությունները: Բայց համաձայն ամբողջատիրական գաղափարախոսության՝ պայքարը պետք է շարունակվի՝ ընդգրկելով արդեն համաշխարհային խնդիրներ: Այսպես, ինչպես նախանշում էր բոլշևիկյան հեղափոխության առաջնորդ Վ. Լենինը, նվաճելով քաղաքական իշխանությունը՝ պրոլետարիատը չի դադարեցնում դասակարգային պայքարը, այլ շարունակում է այն ընդհուպ դասակարգերի ոչնչացումը[24]: Մեկ այլ ամբողջատիրական պետության ղեկավար Ադոլֆ Հիտլերն իր «Իմ պայքարը» գրքում նշում է՝ գերմանական ժողովուրդը պետք է ստեղծի մի պետություն, որի գերագույն նպատակը կդառնա պահպանել և նպաստել իր ազգի, իսկ իրականում՝ նաև ամբողջ մարդկության ազնիվ բաղադրիչները:

Ամբողջատիրական գաղափարախոսության գլխավոր խնդիրն է գոյություն ունեցող քաղաքական վարչակարգի և նրա կուրսի մշտական լեգիտիմացումը: Գաղափարախոսությունը պետք է ապացուցի, որ նպատակին հասնելու հաջողությունը կանխորոշված է կա՛մ պատմության օրինաչափությամբ (մարքսիզմ), կա՛մ բնության կամքով (նացիոնալ-սոցիալիզմ): Բնորոշիչ է այն, որ նոր իդեալական հասարակության կառուցվածքը անքակտելիորեն կապված է մարդու բնական վիճակի փոփոխության հայեցակարգի հետ, քանի որ միայն կատարյալ

---

[23] **Վ. Ի. Լենին,** Մեր ծրագիրը / Երկերի լիակատար ժողովածու, հ. 4, Եր., Հայաստան հրատ., 1982, էջ 117:

[24] Տե՛ս **Վ. Ի. Լենին,** Մեծ նախաձեռնություն / Երկերի լիակատար ժողովածու, հ. 39, Եր., Հայաստան հրատ., 1982, էջ 17:

մարդիկ («մաքուր ռասա», «բազմակողմանի զարգացած անհատ» և այլն) կարող են դառնալ նրա լիարժեք անդամներ:

Ամբողջատիրական վարչակարգի գաղափարախոսությունը չի կարող կյանքի կոչվել առանց հուսալի կազմակերպության՝ կուսակցության: Այդ կուսակցությունը չի ընդունում քաղաքական բազմակարծություն, այդ պատճառով էլ իրացվող կառավարման մեթոդի պայմաններում ձևավորվում է բացառապես **միակուսակցական համակարգ**: Իհարկե, ամբողջատիրական իշխանության տեսաբանները ձգտում են ինչ-որ կերպ արդարացնել միակուսակցական համակարգի ձևավորման և գոյության խնդիրները: «Մեր կուսակցության վիճակը,– նշում է Ի. Ստալինը,– որպես երկրում միակ լեգալ կուսակցության (կոմունիստական կուսակցության մոնոպոլիան), ինչ-որ արհեստական և մտացածին բան չէ… Մեր կուսակցության մոնոպոլիան պայմանավորված է կյանքով, ձևավորվել է պատմականորեն որպես արդյունք այն բանի, որ էսէռների և մենշևիկների կուսակցությունները վերջնականապես արժեզրկվեցին և մեր իրականության պայմաններում դուրս մղվեցին»[25]:

Ամբողջատիրության վարչակարգի տեսության արևմտյան հեղինակների, մասնավորապես Կարլ Ֆրիդրիխի և Զբիգնև Բժեզինսկու բնութագրումներում, մի շարք քաղաքագետների կարծիքով, կան թերություններ: Արևմտյան որոշ հեղինակներ նշում են, որ ամբողջատիրական վարչակարգերը գրեթե չեն փոփոխվում, այլ կործանվում են պատերազմի կամ այլ արտաքին ուժերի ներգործությամբ: Սակայն քաղաքական պրակտիկան ցույց է տվել, որ վարչակարգերը կարող են աստիճանական փոխակերպման՝ տրանսֆորմացիայի[26] ենթարկվել: Այսպես, ըստ լեհ քաղաքագետ Եժի Վյատրի՝ ԽՍՀՄ-ը (Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը) Ստալինի, Խրուշչևի և Բրեժնևի ժամանակ բավականին փոփոխությունների ենթարկվեց: Եվ ըստ այդմ էլ, Եժի Վյատրի կարծիքով, ամբողջատիրական վարչակարգը կարելի է բաժանել ամբողջատիրական և հետամբողջատիրական շրջանների (երբ ամբողջատիրությունը, կուսակցության պաշտոնական գաղափարախոսության մենաշնորհի վերափոխման խնդիրներով պայմանավորված, կորցնում է իր որոշ հատկանիշներ)[27]: Մեկնաբաններից շատերը համարում են, որ Խորհրդային Միությունը նոր փուլ մտավ Ստալինի մահից հետո, երբ կառավարող վերնախավը հրաժարվեց զանգվածային ահաբեկությունից: 1970-

---

[25] **Сталин И. В.** Бесседа с первой американской рабочей делегацией 9 сентября 1927 // Полное собрание сочинений. Т. 10. М.: Политиздат, 1951.

[26] **Տրանսֆորմացիա** (լատ. transformatio – կերպափոխություն, փոխակերպում): 1. Սոցիալական գործողության փոփոխությունները փոխադարձաբար խթանող մոդել: 2. Սոցիալական ինստիտուտների գործառություն (ֆունկցիոնալություն), որը պայմանավորված է անվանական (նոմինալ) հաստատումների նպատակաուղղված ազդեցությամբ: 3. Հասարակական կյանքի տարբեր ոլորտների կամ գործընթացների կերպափոխություն:

[27] Տե՛ս **Вятр Е.** Социология политических отношений. М.: Прогресс, 1979, էջ 345:

ական թվականներին ստեղծվեց խորհրդագիտության նոր դպրոց, որը փաստարկներ էր բերում, թե վարչակարգը վայելում է ժողովրդի աջակցությունը, և իշխանությունների տարանջատման ապացույցներ կան առնվազն քաղաքականության կիրառման հարցում իշխանության հատվածային ու շրջանային մարմինների միջև: Նշված խնդիրների քննարկումները հանգեցրին այն եզրակացության, որ վարչակարգը կարող է հարմարվել նոր պայմաններին, նոր պահանջներին: Սակայն ամբողջատիրության տեսաբանները պնդում էին, որ համակարգի գոյատևման ձախողումը ցույց տվեց ոչ միայն նրա հարմարվելու անկարողությունը, այլև երկրի կառավարմանը ժողովրդի ենթադրյալ մասնակցության ձևական բնույթը: Ըստ որոշ հեղինակների՝ Խորհրդային Միության ամբողջատիրական վարչակարգի ապաստալինացումը խաբուսիկ էր: Իհարկե, ինչ-որ փոփոխություններ տեղի ունեցան, բայց դրանից վարչակարգը չփոխեց իր բնույթը: Ստալինի մահից հետո վարչակարգը վերջ դրեց ահաբեկչությանը և ստիպված էր դիմել որոշակի փոխզիջման հասարակության հետ, իսկ Ն. Խրուշչևից հետո վերափոխման գործընթացը դանդաղեց և նույնիսկ կանգ առավ՝ շարունակելով հենվել կեղծ լեգիտիմության սկզբունքների վրա ընդհուպ Միխայիլ Գորբաչովի պաշտոնավարումը[28]:

Այսպիսով, ո՞րն է ամբողջատիրության՝ որպես ժամանակակից վարչակարգի առանձնահատկությունը, և ինչպե՞ս է այն դրսևորվում: Անտիկ ավտոկրատիաներում պետական համակեցությունը խորապես արմատավորված էր ավանդույթների մեջ: Ամբողջատիրական իշխանությունը, ընդհակառակը, խզում է կապերը ավանդույթների, ընդհանուր համոզմունքների, հավատալիքների հետ և ներկայացվող գաղափարախոսության ներդրմամբ ստիպում է հասարակությանը այն ընդունել: Փաստորեն՝ ամբողջատիրական տիրապետությունն ավելի խորքային է, քան տիրապետման նախորդ ձևերը: Ամբողջատիրությունը կարելի է սահմանել որպես քաղաքական վարչակարգ, որտեղ իշխանությունը ձգտում է փոխել մարդու բնույթը՝ ապահումանիզացնելով նրան: Ամբողջատիրությունը ստիպում է մարդկանց հաշվի առնել գաղափարախոսական «գերիրականությունը»[29]: Այն, ինչպես նշում է ռուս պատմաբան, հրապարակախոս և այլախոհ Միխայիլ Գելերը (1922-1997), փորձում է մարդկանց զրկել մտածելու միջոցներից՝ նրանց դարձնելով մեքենայի պարզ մասնիկներ[30]:

Անգլիացի գրող Ջորջ Օրուելն իր «1984» գրքով կարողացավ ստեղծել մի աշխատություն, որը, կարելի է ասել, լավագույնս է բացահայ-

---

[28] Տե՛ս **Бенетон Ф.** Введение в политическую науку. М.: Весь Мир, 2002, էջ 237:

[29] Տե՛ս **Безансон А.** Бедствие века: Коммунизм, нацизм и уникальность Катастрофы. М.: МиК, Париж: Русская мысль, 2000:

[30] Տե՛ս **Геллер М.** Машина и винтик. История формирования советского человека. М.: МиК, 1994:

տում ամբողջատիրական աշխարհի իրական կողմերը: Որպես գրող Ջ. Օրուելն ավելին կարողացավ անել ամբողջատիրության ըմբռնման խնդրում՝ բացահայտելով ինչ-որ ձև, որը թույլատրեց նրան հասկանալ, կանխազգալ այդ նոր աշխարհի արմատական նորությունը[31]: «Մեծագույն կեղծիքի երկրում[32]» (Անտե Ցիլիգա), «Մեռած բառի կախարդական իշխանությունը» (ռուս բանաստեղծ, Նոբելյան մրցանակի դափնեկիր Բորիս Պաստեռնակ, 1957 թ.), «Թատերական ցուցադրանք» (ռուս գրող, Նոբելյան մրցանակի դափնեկիր Ալեքսանդր Սոլժենիցին, 1974 թ.), «Նոր քաղաքականություն՝ հիմնված խաբեության վրա (լեհ փիլիսոփա Լաշեկ Կոլակովսկի[33]), և այլ գրողների, փիլիսոփաների, քաղաքական գործիչների տարբեր ձևակերպումները խոսում են այն մասին, թե որն էր ամբողջատիրական և հատկապես կոմունիստական վարչակարգերի հիմքը: Ամբողջատիրական վարչակարգեր ունեցող երկրներում կուսակցություն-պետության կողմից վերահսկումը տարածվում էր ոչ միայն մարդկանց գործունեության արտաքին կողմի վրա, այլ նաև ուղղված էր նրանց ներքին կյանքին: Ամբողջատիրական վարչակարգերի ժամանակ, իհարկե, առերևույթ կարող է նաև ամեն ինչ նորմալ թվալ. մարդիկ զբաղված են իրենց աշխատանքով, առօրյա գործերով, ընթացիկ խնդիրներով: Սակայն խորքային իրականությունը ընկած է այդ ամենօրյա տեսանելիությունից դուրս, և այդ թվյացյալ տեսանելիությունը ստիպում է հավատալ նրան, որ, ինչպես ասում էր Օսիպ Մադելշտամը, ամեն ինչ նորմալ է, որովհետև տրամվայները գնում են: Եվ ընդհանրապես ամբողջատիրական մեքենան աշխատում է իրերի օբյեկտիվության կեղծմամբ, ոչնչացմամբ և այնպիսի մարդկանց վերարտադրությամբ, որոնք զրկված են ինքնուրույն գիտակցությունից, հետևաբար նաև բարոյական բարձր հակադրումից:

Բանալի բառեր – *քաղաքական վարչակարգ, ամբողջատիրական իշխանություն, ժողովրդավարություն, նացիոնալ-սոցիալիզմ, ֆաշիզմ, գաղափարախոսություն, ամբողջատիրական մարդ*

ЛЮДВИГ ВАРДАНЯН – ***Понятие «тоталитаризм» и особенности тоталитарной власти.*** – Одним из главных направлений политологии является исследование политических режимов. При этом изучаются способы их функционирования, методы правления, степень развития политических свобод и открытости общества. Характерные черты тоталитарной власти, тоталитарного режима: фактическое отсутствие конституционных прав и свобод, полное подчинение

---

[31] **Ջորջ Օրուելի** «1984» աշխատությունը գրվել է 1948 թվականին, իսկ նկարագրվող դեպքերը ծավալվում են 1984 թվականին: Գիրքը հրատարակվել է 1949 թվականին՝ արձանագրելով մեծ հաջողություն (**Ջ. Օրուել,** 1984 [Վեպ]: Թարգ. անգլ.՝ Ա. Աթաբեկյանի [1989], Եր., «Անտարես», 2012):

[32] 1936-1937 թվականներին Անտե Ցիլիգան Փարիզում գրել է «Մեծագույն կեղծիքի երկրում» գիրքը, որը լույս է տեսել 1938 թվականին: Այդ գրքում ներկայացվում է ԽՍՀՄ-ի և նրա վարչակարգի վերլուծությունը՝ այն դիտարկելով որպես պետական կապիտալիզմ:

[33] Տե՛ս **Kolakowski L.,** Totalitarianizm and the lif // Howe I. ed., «1984» revisited, NY: Harper and Row, 1983, էջ 122-135:

жизни интересам властной верхушки, жёсткий контроль над обществом, подавление политической оппозиции, насилие над инакомыслящими, отсутствие идеологического плюрализма, гражданского общества и т. д.

В статье рассмотрено происхождение, использование, разработка и толкование понятия «тоталитаризм». Разобраны идеологические основы тоталитаризма в различные исторические периоды, начиная с Древнего мира. Проанализированы некоторые события XX века, поскольку именно в этот период тоталитаризм стал политической реальностью. Изложена точка зрения, согласно которой каждая тоталитарная власть нуждается в дифференциации.

Ключевые слова: *политический режим, тоталитарная власть, демократия, национал-социализм, фашизм, идеология, тоталитарный человек*

LUDVIG VARDANYAN – *The Concept of "Totalitarianism" and Features of Totalitarian Power.* – One of the main directions of political science research is the political regimes, which reflect the way the political system functions, methods of ruling, degree of political freedom and openness of the country. The peculiar features of a totalitarian power or a totalitarian regime are: the actual elimination of constitutional rights and freedoms, the full submission of public life to the interests of the authorities and the establishment of totalitarian control over society, the widespread use of political opposition and violent actions against dissidents, the absence of ideological pluralism of civil society, etc.

The article discusses various kinds of questions about the origin and uses, development and interpretation of the concept"totalitarianism". The manifestations of the ideological roots of totalitarianism in various periods, dating back to the political teachings of the Ancient World, are presented. In particular, the events of the 20th century and related comments are discussed, since it was during this period that totalitarianism became a political reality with its full-fledged manifestation. Turning to the problem of the characteristics of totalitarian power, the author presents a point of view, according to which each totalitarian power needs differentiation.

Key words – *political regime, totalitarian power, democracy, national-socialism, fascism, communist regime, ideology, totalitarian man*

Ներկայացվել է՝ 11.09.2019
Գրախոսվել է՝ 30.10.2019
Ընդունվել է տպագրության՝ 03.12.2019